ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЙ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF INTERNATIONAL RELATIONS

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 ● Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 ● 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia (+374 60) 71-00-78, (+374 60) 71-00-79, int.rel@ysu.am, www.ysu.am

№ 235 «__08____»___09_____2023 թ.

Արձանագրություն N 235

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2023թ-ի սեպտեմբերի 8-ի նիստի

Նիստին ներկա էին գիտխորհրդի 27 (քսանյոթ) անդամներից 23-ը:

1. 2023-2024 ուստարվան առնչվող հարցեր. Գնահատման համակարգի և ռեգիստրարի հետ կապված հարցեր: Մագիստրատուրայի ընդունելության 2-րդ փուլի և բակալավրի ընդունելության արդյունքների ամփոփում /զեկ.՝ գիտ. խորհրդի նախագահ Տիգրան Եփրեմյան/:
2. պ.գ.դ., դոկտոր **Արմենակ Սարիբեկի Մանուկյանի «Политические процессы Советской Армении (1920-1950гг.)»** մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին հարցը:
3. ք.գ.թ., ասիստենտ **Փայլակ Աշոտի Ենգոյանի ««Փափուկ ուժի» տեսությունը. դասախոսությունների նյութեր»** ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության երաշխավորելու մասին հարցը:
4. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման հարցը /զեկ.՝ գիտքարտուղար Գ. Բալասանյան/:
5. Ասպիրանտի ատենախոսության թեմայի փոփոխության հարցը /զեկ.՝ գիտքարտուղար Գ. Բալասանյան/:
6. Ռոտացիայի ցուցակների հաստատման հարցը / զեկ.՝ դեկանի տեղակալ-գրասենյակի ղեկավար Գոռ Պետրոսյան/:
7. Անվանական կրթաթոշակների տրամադրման հարցը / զեկ.՝ դեկանի տեղակալ-գրասենյակի ղեկավար Գոռ Պետրոսյան/:

8. Նոր ձևավորված գրասենյակի գործունեության ներկայացում / զեկ.՝ դեկանի տեղակալ- գրասենյակի ղեկավար Գոռ Պետրոսյան/:
9. Ընթացիկ հարցեր:

Խորհուրդը որոշեց.

1. պ.գ.դ., դոկտոր **Արմենակ Սարիբեկի Մանուկյանի «Политические процессы Советской Армении (1920-1950гг.)»** մենագրությունը երաշխավորել տպագրության:
2. ք.գ.թ., ասիստենտ **Փայլակ Աշոտի Ենգոյանի ««Փափուկ ուժի» տեսությունը. դասախոսությունների նյութեր»** ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության:
3. ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ասպիրանտ **Առլեն Մայիսի Շահվերդյանի** թեկնածուական ատենախոսության նոր թեմա հաստատել «Էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրը ռազմավարական գնահատման համատեքստում (ՀՀ օրինակով)» **ԻԳ.00.02 – «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»** մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

4. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտներին և հայցորդներին ատեստավորել և երաշխավորել ուսուցման հաջորդ տարի տեղափոխվելու համար:
5. Ռոտացիայի ցուցակները հաստատել:
6. ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի միջազգային հարաբերություններ բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող **Գագիկ Եկմալյանին** ներկայացնել Ջոն Կիրակոսյանի անվան կրթաթոշակի, իսկ քաղաքագիտություն բաժնի բակալավրի 4-րդ կուրսի ուսանող **Արմեն Նավասարդյանին**՝ Ռուբեն Միրոյանի անվան կրթաթոշակի:
7. Ընթացիկ հարցերի շրջանակներում լսվեց ԵՊՀ Քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր **Ա. Ենգոյանի**, դոցենտ **Ա. Սարգսյանի**, ասիստենտներ **Խ. Ազատյանի** և **Փ. Ենգոյանի** մասնակցությամբ **21T-5F330 ծածկագրով ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորված «ՀՀ առջև ծառացած մարտահրավերները գլոբալ զարգացման հարացույցի փոխակերպման համատեքստում»** վերնագրով կոլեկտիվ մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին հարցը և որոշվեց երաշխավորել հրատարակության:

Գիտական խորհրդի նախագահ *Տ. Եփրեմյան*

Գիտական խորհրդի քարտուղար *Գ. Բալասանյան*